ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 51-Ն

« 07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 23090.9 թիվը փոխարինել 21590.9 թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 1400.0 թիվը փոխարինել 1600.0 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 1, դաս 1 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի 4247.7 թիվը փոխարինել 4922.7 թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի 860.0 թիվը փոխարինել 935.0 թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 (նախադպրոցական հիմնարկի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 11102.8 թիվը փոխարինել 11502.8 թվով, 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածի 2700.0 թիվը փոխարինել 2300.0 թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 300.0 թիվը փոխարինել 600.0 թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 5, դաս 1 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 9199.9 թիվը փոխարինել 8999.9 թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 300.0 թիվը փոխարինել 650.0 թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 1 (գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 6707.7 թիվը փոխարինել 6807.7:
6. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 509.4 թիվը փոխարինել 209.4 թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 4, դաս 1 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 1070.8 թիվը փոխարինել 1370.8 թվով:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական